ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2025 թվականի կարիքների համար արխիվացման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 06.11.2024թ. N 377/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 20.11.2024թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Սարգսյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Մ.Աթոյանը, Գ.Մելքոնյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին
1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները

-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Սարգսյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.
1" Ռոման Սողոմոնյան Ռաֆիկի (ՀՀ, Շիրակի մարզ, գ.Գեղանիստ-5փ, 3-րդ նրբ., տուն-2)
2" «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊՈԱԿ-ը (ք.Երևան, Հր. Քոչարի-5/2)
3. «ԳԱՐԱՆՏ 24 ՍՊԸ-ն (ք.Երևան, Նալբանդյան-25/14շ., բն.76)

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Չ/Հ	Մասնակիցների անվանումները	Ծառայության անվանումը	Ներկայացրած գները ՀՀ դրամ			պլանավորված ընդհանուր գին ՀՀ դրամ
				ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	ԱԱՀ	ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ	
1	1	Ռոման Սողոմոնյան Ռաֆիկի	Արխիվացման ծառայություններ	2 200 000	0%	2 200 000	**4 290 000**
2		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊՈԱԿ		2 864 250	20%	3 437 100	
3		«ԳԱՐԱՆՏ 24 ՍՊԸ		4 000 000 000	20%	4 800 000 000	

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. Առաջին տեղը զբաղեցրած Ռոման Սողոմոնյան Ռաֆիկի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը, սակայն մասնակցի կողմից հայտով ներկայացված Հավելված N 1-ը՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև մասնակիցը չի նշել իր կազմակերպաիրավական կարգավիճակը:

2. ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն մյուս մասնակիցների հայտերը մերժել:

5. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Համաձայն ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/4 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/4 ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և համակարգի միջոցով ծանուցել Ռոման Սողոմոնյան Ռաֆիկին առաջարկելով՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

-Նիստը վերսկսել՝ 2024 թվականի նոյեմբերի 22-ին, ժամը 10:00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Սարգսյան

Անդամներ՝ Մ.Աթոյան

Գ.Մելքոնյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան